



ԵՎՐԱՍԻԱ  
ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՇԻՄԱԴՐԱՄ

# Անաչառ լրատվություն Հայաստան- Ադրբեջան հարաբերությունների մասին

ՀՌԿԿ վարած ֆոկլուս խմբերի որոշ արդյունքներ

Հեղինե Սանասյան, ՀՌԿԿ-Հայաստանի տնօրեն

21-ը փետրվարի, 2009

Երևան, Հայաստան

[www.crrccenters.org](http://www.crrccenters.org); [www.crrc.am](http://www.crrc.am)

# Նախագծի նպատակը

- նպաստել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների և դարաբաղյան հակամարտության մասին բարեխիղճ և անաչառ լրատվության մատուցմանը,
- նպաստել Հայաստանում և Ադրբեջանում գործող խմբագիրների, լրագրողների և լրագրողական հասարակական կազմակերպությունների համագործակցության ցանցի ձևավորմանը:

Այս նախագիծը ֆինանսավորվում է Հայաստանում Բրիտանական դեսպանատան կողմից

# Հետազոտության նպատակը


Հետազոտության հիմնական նպատակը՝ լրատվամիջոցների հանդեպ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների լուսաբանման խնդրում վստահության աստիճանի մասին հասարակական կարծիքի բացահայտումն է:



# ՀՌԿԿ-ՏՀՆ. ընդհանուր տեղեկություններ

- Թեմատիկան` Ժողովրդագրություն, կրթություն, գրադավածություն, միգրացիա, առողջապահություն, սոցիալական ինստիտուտներ, սոցիալական կապիտալ, քաղաքականություն, հանցագործություն և տնտեսական վիճակ:
- Ընտրանքը. բազմաստիճան քլաստերային ընտրանք, ներկայացուցչական մայրաքաղաքի, այլ քաղաքների և գյուղական վայրերի համար;
- Ժամկետը. ամենամյա, 2004թ. ի վեր
- ՏՀՆ 2007թ. հետազոտություն  
8053 տնային տնտեսությունների (SS) և գրեթե նույնքան անհատների հետազոտություն, որոնցից.  
2514-ը` Հայաստանում,  
2148-ը` Ադրբեջանում և  
3391-ը` Վրաստանում;

ՀՌԿԿ ՏՀԻ 2007. Հարցվածների (8053 չափահաս)՝ ազգային քաղաքականության մասին տեղեկատվություն ստանալու առաջին աղբյուրը (% ամբողջի մեջ)



## Մեջբերումներ. ԶԼՄ-ների ժողովրդայնությունը և վատահոլությունը դրանց հանդեպ. Հայաստան

- «Ես չեմ վատահում հեռուստատեսությանը քաղաքականության խնդրում: Եվ այլ խնդիրներում: Կարծում եմ, այնտեղ ինչ-որ օբյեկտիվ բան չկա:» (Կին, 18-40, Հայաստան)
- «Ես չեմ հավատում հեռուստատեսությանը, որովհետև նրանք բոլորովին չեն համապատասխանում իրականությանը: Լինում են դեպքեր, երբ դու ականատես ես մի բանի, իսկ նրանք հաղորդում են բոլորովին այլ բան:» (Կին, 18-40, Հայաստան)
- «Առաջին ալիքը իշխանությունների ալիքն է, ցույց են տալիս այն, ինչ իրենց թելադրում են: Մինչդեռ “Շանթը” մի փոքր ճշմարտություն ասում է:» (տղամարդ, 40+, Հայաստան)

# Մեջբերումներ. ԶԼՄ-ների ժողովրդայնությունը և վստահությունը դրանց հանդեպ. Հայաստան (շար.)


- «Կարծում եմ, թոշակառուներն ավելի շատ ռադիո են լսում, երիտասարդներն ավելի շատ հեռուստատեսություն են դիտում և օգտվում ինտերնետից, իսկ կանայք միայն հեռուստատեսություն են դիտում:» (տղամարդ, 18-40, Հայաստան)
- «Հատուկ կողմնորոշում չկա... գյուղերում Հ1 են դիտում, իսկ վարորդները ռադիո են լսում:» (կին, 18-40, Հայաստան)
- «Լուրերի համար հեռուստացույց չեմ դիտում, միայն մշակութային իրադարձությունների համար»: (կին, 18-40, Հայաստան)
- «Ես մի ժամանակ լսում էի “Ամերիկայի ձայնը”, բայց այլևս չեմ լսում: Չեմ հավատում:» (տղամարդ, 40+, Հայաստան)

# Մեջբերումներ. ՋԼՄ-ների ժողովրդայնությունը և վստահությունը դրանց հանդեպ. Ադրբեջան

- « Կարծում եմ շրջաններում մարդիկ հիմնականում հեռուստացույց են դիտում, և հնարավոր է միայն մեկ կամ երկու այլք դիտել շրջաններում: Ինչևէ, մարդիկ Բաքվում տեղեկություն ստանալու համար օգտվում են ինտերնետից և թերթերից:» (կին, 18-40, Ադրբեջան)
- «Քաղաքականացված մարդիկ դիտում են ANS հեռուստաալիքը, ITV-ն դիտում են տարբեր խավերի մարդիկ:» (կին, 18-40, Ադրբեջան)
- «Ամեն ինչին չէ, որ վստահում եմ, բայց ի համեմատությունն պետական ՋԼՄ-ների, ավելի շատ վստահում են անկախ ՋԼՄ-ներին:» (կին, 18-40, Ադրբեջան)
- « Կարծում եմ, թերթերը գերադասելի են այլ ՋԼՄ-ներից: Դրանք կարող են ուշացումով հասնել, կամ հնացած տեղեկություններ հաղորդել, բայց, այնուամենայնիվ, մարդիկ թերթ կարդում են:» (կին, 18-40, Ադրբեջան)



# ՀՌԿԿ ՏՀԻ 2007. Հարցվածների վստահությունը ՋԼՄ-ների հանդեպ (% ամբողջի մեջ)



# ԶԼՄ աչառու թյուն



چیف جسٹس کی کوریج روکنے کیلئے متحدہ نے سندھ میں 3 نجی ٹی وی چینلوں کی نشریات بند کرادیں۔  
کے جی غازیان

# Մեջբերումներ. ԶԼՄ-ների աչառությունը. Հայաստան

- «Բոլոր ԶԼՄ-ներն էլ՝ պետական, թե մասնավոր, վերահսկվում են:» (տղամարդ, 40+, Հայաստան)
- «Շատ հաճախ ականատես եմ եղել, երբ մեր հեռուստաընկերությունները թարգմանություններ են անում ռուսական կայաններից, տալիս են 180 աստիճան հակառակ տեղեկատվություն»: (տղամարդ, 18-40, Հայաստան)
- «Դրա [աչառության] հետևանքով էլ ոչ ոք նրանց [ԶԼՄ-ներին] այսօր չի վստահում:» (կին, 18-40, Հայաստան)


## Մեջբերումներ. ՁԼՄ-ների աչառությունը. Հայաստան (շար.)

- «ՁԼՄ-ների քանակը բավարար է, բայց մրցակցությունն ընթանում է ոչ թե համայնքի, այլ բուրգի գագաթի վստահությունը շահելու համար. ում ավելի շատ փառաբանել, ավելի լավ ֆինանսավորվելու, ավելի շատ ֆիլմեր և ծրագրեր ունենալու համար: Նրանք պիտի իրենց լսարանի համար աշխատեն:» (Կին, 18-40, Հայաստան)
- «Նրանք [թերթերը] ստում են և հիմքեր չունեն: Նրանք տպում են այն, ինչ հրամայվում է, այն, ինչ իրենց ձեռնտու է:» (Կին, 40+, Հայաստան)
- «Մեր ասածը չի նշանակում, որ ՁԼՄ-ները պետք է խախտումներ անեն: Ես կարծում եմ, նրանք պարզապես պետք է ավելի վարպետորեն ստեն, որպեսզի մարդիկ հավատան:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

## Մեջբերումներ. ՁԼՄ-ների աչառությունը. Ադրբեջան

- «Ադրբեջանի այսօրվա ՁԼՄ-ները բաժանված են երկու մասի՝ իշխանամետ և ընդդիմադիր:» (կին, 40+, Ադրբեջան)
- «Ադրբեջանում դրանք բաժանված են երկու կողմի, և, իշխանամետ, թե ընդդիմադիր՝ համարյա ոչ մեկն էլ օբյեկտիվ չի: Նրանք երկու ճակատների համար են պայքարում և փող են աշխատում թերթեր հրատարակելով:» (տղամարդ, 18-40)
- «Մեր դեպքում, չնչին բացառություններով, համարյա բոլոր ՁԼՄ-ներն անկախ չեն: Գոյություն ունեն իշխանամետ և ընդդիմադիր ՁԼՄ-ներ: Իշխանամետ ՁԼՄ-ները լուրերում չափազանություններ են հաղորդում, իսկ ընդդիմադիր ՁԼՄ-ները ստեր և հերյուրանքներ են գրում:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)
- «Դժվար խնդիր է: Նրանք բոլոր տարբեր բաներ են հաղորդում, և կարելի է մոլորվել:» (կին, 18-40, Ադրբեջան)
- «ՁԼՄ-ները նեկայացնում են որոշակի խմբավորումների շահերը, և ոչ թե ազգային արժեքները:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

ՀՈԿԿ ՏՀԻ 2007. Արդյոք ՏՏ-ները բաժանորդագրվում են թերթերի/ամսագրերի (% ամբողջի մեջ)



# Միջազգային լրատվություն

Հենց սպառողն է, որ սպառման է ենթարկվում:

Դուք հեռուստատեսության արտադրանքն եք:

**It is the consumer  
who is consumed.**

**You are the product  
of t.v.**

# Մեջբերումներ. Միջազգային լրատվության որակը. Հայաստան

- «... հայկական ՁԼՄ-ները տեղեկությունները վերցնում են այլ ալիքներից: Հաճախ կարող ենք տեսնել այլ ալիքների լոգոները, օրինակ, ԿՀԶ (OPT), կամ այլ: Նշանակում է՝ պարզապես վերցնում են նրանց պատրաստի նյութերը, և եթե այնտեղ տեղեկատվության բաց կա, կամ ինչ-որ բան ճիշտ չէ, ապա մենք ամբողջապես ապատեղեկատվություն ենք ստանում:» (տղամարդ, 18-40, Հայաստան)
- «Կարծում եմ, մեկնաբանությունները խիստ սուբյեկտիվ են: Ցույց են տալիս այն, ինչ ժողովրդին պետք չէ:» (կին, 18-40, Հայաստան)
- Կարծում եմ միջազգային լրատվությունը հաղորդելիս, հայկական ՁԼՄ-ները հիմնականում խեղաթյուրում են ադրբեջանական կամ թուրքական նորությունները: Երբեք Թուրքիայի մասին լավ լուր չես լսի: Դա սուբյեկտիվ է:» (կին, 18-40, Հայաստան)
- «Չեմ կարծում, թե նրանք դա դիտավորյալ են անում: Պարզապես, նրանց մասնագիտական մակարդակն է շատ ցածր:» (տղամարդ, 18-40, Հայաստան)



# Մեջբերումներ. Միջազգային լրատվության որակը. Ադրբեջան

- «Կարծում եմ, նրանք անբավարար միջազգային լրատվություն են հաղորդում: Ես նորությունները թուրքական ալիքներով եմ դիտում: Նրանք ավելի վերլուծական, ավելի մանրամասն և թարմ լուրեր են հաղորդում, մինչդեռ մերոնք արխիվային պատկերներ են ցույց տալիս և համեմում են դրանք դատարկ խոսքերով:»  
(տղամարդ, 18-40+, Ադրբեջան)
- «Մեր երկրում կան խոչընդոտներ, սահմանափակումներ: Այդ պատճառով էլ լուրերը ստանում են ինչ-որ տեղից:»  
(տղամարդ, 18-40+, Ադրբեջան)

# Մեջբերումներ. Միջազգային լրատվության որակը. Ադրբեջան

- «Դժբախտաբար, հեռուստաալիքներում վերջերս չափազանց մեծ տեղ է հատկացվում շոու բիզնեսին: Ամեն ծրագիր իր ամենօրյա եթերաժամն ունի: Մարդիկ հոգնել են շոու բիզնեսին վերաբերող նորություններից: Ժողովրդի 10 տոկոսն է դիտում այդ ծրագրերը, մնացած 90 տոկոսը չի դիտում:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)
- «Ես հիմնականում օգտվում եմ Ինտերնետից, որովհետև Ադրբեջանում գործող մենաշնորհի պայմաններում ԶԼՄ-ներին վստահելը պարզապես ժամանակ վատնել է: Աշխատում եմ իրադարձությունների մասին տեղեկանալ Ինտերնետից՝ ադրբեջաներեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

# Հնարավոր ուղղվածություն



Մեջբերումներ. Հնարավոր շեշտադրում ազգային ԶԼՄ-ներում միջազգային լրատվության վրա. Հայաստան

- «Այն երկրներում, որտեղ մեծ հայկական համայնքներ կան: Յուրաքանչյուր հայ, որ երկրում էլ որ ապրի, պիտի զգա, որ ինքն իր հայրենիքի մի մասն է:» (Կին, 40+, Հայաստան)
- «Ես կցանկանի, որ ԶԼՄ-ները կենտրոնանային երկու թշնամի երկրների Թուրքիայի և Ադրբեջանի վրա: Մենք նրանցից ամեն տեսակ թշնամական գործողություններ կարող ենք սպասել: Նրանք զինվում են և բազմապատկում իրենց ռազմական բյուջեն. ի վերջո, որքան լավ ես ճանաչում թշնամուդ, այնքան ավելի հեշտությամբ կհաղթես նրան:» (տղամարդ, 18-40, Հայաստան)
- «Չեմ կարող նշել շրջանները, բայց կարող եմ նշել երկրները, որնց նրանք /ԶԼՄ-ները/ պետք է ուշադրություն դարձնեն՝ ԱՄՆ և Ռուսաստան, որովհետև առանց նրանց թույլտվության Թուրքիան և Ադրբեջանը չեն կարող ռազմական գործողություններ սկսել:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

## Մեջբերումներ. Հնարավոր շեշտադրում ազգային ԶԼՄ-ներում միջազգային լրատվության վրա. Ադրբեջան

- « *Կցանկանայի ավելի շատ տեղեկություն ստանալ տարածաշրջանի երկրների մասին, ինչպիսիք են Իրանը, Ռուսաստանը, Թուրքիան, որովհետև դա կարևոր է տնտեսական և քաղաքական առումով: Ընհանուր առմամբ մենք պետք է տեղեկացված լինենք բոլոր երկրների մասին, Ադրբեջանը ինտեգրվում է Եվրոպա, մեր ուսանողները սովորում են արտասահմանում, և մենք պետք է լավ տեղեկացված լինենք:*» (կին, 40+, Ադրբեջան)
- « *Մեզ պետք չեն եվրոպական նորությունները: Կարծում են ավելի շատ ուշադրություն է պետք դարձնել հարևան երկրներին:*» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Մեջբերումներ. Հնարավոր շեշտադրում ազգային ԶԼՄ-ներում միջազգային լրատվության վրա. Ադրբեջան

- *«Իրականում Ադրբեջանի հեռուստաալիքները պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը հարևան երկրների վրա: Իրանը, Թուրքիան, Մերձավոր Արևելքը և Եվրոպան հետաքրքրում են մեզ: Ուշադրություն պետք է դարձնել այն երկրների վրա, որնք մեր երկրի հետաքրքրությունների ներքո են, և ուր ապրում են ադրբեջանցիները:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)*
- *«Իհակրե մեծամասամբ «եղբայր» երկրները, որոնք օգնում են մեզ» (կին, 18-40, Ադրբեջան)*



*Hey! Mainstream Media...*

*Why Not Try Demoralizing  
The Enemy For a Change?*

ԼՂ

Հեյ, հիմնական լրատվամիջոց...

Փոփոխություններ հարուցելու  
համար ինչ՞ու չես փորձում  
բարոյագրկել թշնամուն:

## Մեջբերումներ. ԶԼՄ-ների դերը Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի մասին հաղորդումներում. Հայաստան

- *«Շատ կարևոր է, որ Ադրբեջանի մասին լրատվություն լինի, որպեսզի մենք գիտենանք մեր հարևան, թշնամի երկրի մասին:» (տղամարդ, 18-40, Հայաստան)*
- *« Թող բաց լինի, բայց Ղարաբաղի մասին ամեն ինչ չէ, որ կարելի է ասել ուղղակիորեն, օրինակ, միգրացիայի խնդիրը, կամ եթե նման խնդիր կա, այն չպիտի բարձրացվի: ... որովհետև եթե դա հասնում է ժողովրդին, ապա կարող է հասնել և մեր թշնամիներին:» (կին, 18-40, Հայաստան)*



## Մեջբերումներ. ԶԼՄ-ների դերը Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի մասին հաղորդումներում. Հայաստան

- *«Ես վստահ եմ, որ Ադրբեջանում շատ լավ գիտեն Ղարաբաղի և Հայաստանի իրավճակի մասին: Կարող ենք եզրակացնել, որ տեղեկատվությունը գաղտնի է միայն մեր ժողովրդի համար: Եթե Ադրբեջանը դրա կարիքն ունի, ապա քաջատեղյակ է տեղեկատվությանը:» (կին, 18-40, Հայաստան)*
- *«... Մենք տեղյակ չենք, թե ինչ է կատարվում Ղարաբաղում: Որոշ թշնամություն կա Ղարաբաղի և Երևանի ժողովրդի միջև, հատկապես, երիտասարդ սերնդի մեջ: Սա այսպես է, որովհետև ԶԼՄ-ները չեն հայտնում, թե Ղարաբաղում ինչ է տեղի ունենում, թե ինչ են մտածում մարդիկ Ղարաբաղում, ինչ են մտածում Հայաստանի ժողովրդի մասին, և նույնը կարելի է ասել Ղարաբաղի մասին` Հայաստանի վերաբերյալ:» (տղամարդ, 18-40, Հայաստան)*

## Մեջբերումներ. ԶԼՄ-ների դերը Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի մասին հաղորդումներում. Ադրբեջան

- « Կարծում եմ նրանք մեզ չպետք է հանգստացնեն, այլ պետք է ավելի բորբոքեն մեր ատելությունը թշնամու նկատմամբ:» (կին, 18-40, Ադրբեջան)
- “«[...] ... եթե դա Ղարաբաղի մասին է, պետք է ուշադրության կենտրոնում լինի, որպեսզի մի տեսակ ատելություն ստեղծվի և պետք է լայնորեն լուսաբանվի: Բայց եթե վերաբերվում է ականառու նորություններին, կարիք չկա:» (կին, 18-40, Ադրբեջան)
- « Ազգային ԶԼՄ- ների դերը կայանում է նրանում, որ նրանք հաղորդեն այնպիսի նորություններ, որոնք կարդալուց երիտասարդները ավելի հայրենասեր կդառնան և կունենան պատերազմելու ցանկություն և ատելություն:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)


Մեջբերումներ. ԶԼՄ-ների դերը Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի մասին հաղորդումներում. Ադրբեջան

- *«Հայերը ԶԼՄ-ներում շատ թույլ են ներկայացված, ներկայացված են միայն որպես ներքին թշնամիներ: Բայց հայերը անգամ ասում են իրենց երեխաներին, որ ադրբեջանցիները նրանց թշնամիներն են: Նրանք շատ թույլ են ներկայացված որպես թշնամիներ:» (կին, 40+, Ադրբեջան)*
- *«Օրինակ՝ հունվարի 20-ի և Խոջալայի ողբերգությունները ամեն տարի ներկայացվում են նույն կերպ: Կարծում եմ նրանք պետք է փոխեն ֆորմատը: Այս ողբերգությունները պետք է ներկայացվեն այլ կերպ, որպեսզի գրավեն մարդկանց ուշադրությունը:» (կին, 18-40, Ադրբեջան)*


## Մեջբերումներ. ԶԼՄ-ների դերը Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի մասին հաղորդումներում. Ադրբեջան (շար.)

- «Ներքին կարգով մենք պետք է դաստիարակենք մեր երիտասարդությանն այն հոգեբանությամբ, որ ոչ մի կտոր դարաբաղյան հող չի կարող տրվել մեր թշնամիներին: Մա այն գաղափարն է, որ պիտի առաջ մղվի ներքին կարգով: Ես վստահ եմ, որ դա ի վերջո արդյունք կտա:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)
- «Ընդհանուր առմամբ, 90-ականների հարձակոդակաանությունը թուլանում է: Ե՛վ մենք, և՛ նրանք դառնում ենք անտարբեր: Նրանք իրենց սոցիալական և տնտեսական խնդիրներն ունեն, մենք՝ մերը, և դրանք լուսաբանվում են ԶԼՄ-ներում: Բայց այս խնդիրը մնում է չլուծված:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)
- «ԶԼՄ-ները պետք է այդ լուրերը ոչ միայն ադրբեջաներեն, այլ նաև անգլերեն, որպեսզի աշխարհը տեղյակ լինի այս խնդրի մասին:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)
- «Իհարկե, պետական հեռուստատեսությունը ճշմարիտ նորություններ է հաղորդում: Հնարավոր է, որ նրանք որոշ բաներ թաքցնեն, բայց ոչ ամեն ինչ:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

## Հայաստան. Վերաբերմունքը հարևանների նկատմամբ (ՀՌԿԿ ՏՀՆ 2007)




# Աղբբեջան. Վերաբերմունքը հարևանների նկատմամբ (ՀՌԿԿ ՏՀՆ 2007)



# Հու՞յս

- «Ցանկանում եմ ասել, որ մենք ավելի շատ ենք ինտերնետից օգտվում, որովհետև կան կայքեր, որտեղից կարելի է օբյեկտիվ տեղեկատվություն ստանալ Հայաստանի մասին» (տղամարդ, 18-40)
- «Ես վստահում եմ թերթերին և ինտերնետին, քանի որ այնտեղ արտահայտում են տարբեր կարծիքներ: Կարող ես կարդալ և ինքնուրույն վերլուծել:» (տղամարդ, 18-40, Հայաստան)
- «Ոչ-ոք չի կարող ազդել նրա վրա [ինտերնետի]» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)
- «Կառավարությունը չի կարող ազդել նրա վրա [ինտերնետի]:» (18-40, Ադրբեջան)

# ՀՌԿԿ ՏՀԻ 2007. Հարցվածների գիտելիքները ինտերնետի/էլ. փոստի վերաբերյալ (% ամբողջի մեջ)





# Հանձնարարականներ

- Հաշվի՛ առեք, որ դժվարությունները ասիմետրիկ են. նույնը չեն ամեն երկրի համար:
- Այս հանձնարարականները փոփոխելի են, և այլ լավ հանձնարարականները հնարավոր են, առաջարկները՝ ողջունելի:

## Ընդհանուր. Առաջարկել քննարկում լրագրության վերաբերյալ

- Ո՞րն է լրագրության արվեստը, որն այն դարձնում է ավելի, քան պարզապես «աշխատանք»:
- Ու՞մ են պարտական լրագրողները (օրինակ այն բանի համար, որ մարդիկ ակնկալում են հրահրող հռետորականություն)

## Հանձնարարականներ տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններին և լրագրողներին

Կազմակերպել դասընթացներ լրագրողների համար՝ նպատակ ունենալով ստեղծել այնպիսի ՋԼՄ-ներ, որոնք.

- (հատկապես հեռուստատեսության բնագավառի ՋԼՄ-ները) ավելի մեծ ուշադրություն կհատկացնեն միջազգային լրատվությանը և կօգտվեն տարաբնույթ աղբյուրներից, կստուգեն փաստերը և համարժեք վերլուծություն կմատուցեն
- կխուսափեն բորբոքիչ հաղորդումներից
- ավելի սակավարժեք տեխնոլոգիական լուծումներ կկիրառեն ավելի լավ միջազգային լրատվություն մատուցելու համար

# Հանձնարարականներ դոնոր համայնքին

Նպաստել Web2.0 –ի և տեխնոլոգիական հեղափոխությունից օգտվելու կարողությունների տարածմանը

- ազգաբնակչության համար ավելի մատչելի դարձնել բջջային հեռախոսներով կարճ հաղորդագրությունների տեխնոլոգիայի կամ այլ բջջային տեխնոլոգիաների միջոցով լրատվություն ստանալու հնարավորությունը,
- բջջային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ աշխատանքներ տանել՝ բջջային հեռախոսներով նորությունների վեբ կայքերից օգտվելու գների իջեցման ուղղությամբ,
- հաճելի և անվճար դասընթացներ կազմակերպել նրանց համար, ովքեր երբեք չեն օգտվել Ինտերնետից, հատկապես՝ բջջային հեռախոսով:

# Հանձնարարականներ դոնոր համայնքին (շար.)

## Ուսուցանել և խթանել պատշաճ էլեկտրոնային լրագրության մշակույթը

- նախնական ներդրումներ հատկացնել լավագույն հայ և արհրբեջանցի էլեկտրոնային լրատվական արքյուրներին: Այս կարգի հաջողված ծրագիր է [www.civil.ge](http://www.civil.ge) -ն Վրաստանում:
- հորդորել էլեկտրոնային լրագրողներին՝ Ինտերնետում հրապարակումներ կատարելիս հետևել տպագիր լրատվամիջոցների ստանդարտներին: Եվրասիաներթն այդպիսի՝ անգլերեն և ռուսերեն հրապարակման օրինակ է:
- երկխոսական (ինտերակտիվ) վեբկայքեր ստեղծելու համար օգտագործել հայփրլրլինքինգը, վագոդ տեսաշարերը, բլոգինգը,
- հորդորել էլեկտրոնային լրագրողներին հրապարակել որևէ օմբուդսմենի էլեկտրոնային հասցե՝ այնպիսի մեկի, որի հետ կարելի է հետադարձ կապի մեջ լինել, և որը կարող է լրջորեն մոտենալ բողոքներին

# Հանձնարարականներ հետազոտող համայնքին

- **ՉԼՄ-ների և աջակցողների և լրատվություն մատուցողների շրջանում զարգացնել հետազոտությունների վրա հիմնված լրատվության մշակույթը.**
  - ապահովել հետազոտություններ՝ ՉԼՄ-ների զարգացմանն ավելի նպատակամետ աջակցելու համար,
  - այս զեկույցում ներկայացված ֆոկուս խմբերին համանման խմբեր վարել Հայաստանի և Ադրբեջանի շրջաններում,
  - ընդլայնել Ադրբեջանում թուրքական ՉԼՄ-ների, ինչպես նաև Ադրբեջանում և Հայաստանում ռուսական ՉԼՄ-ների ունեցած ազդեցության ուսումնասիրությունը,
  - ուսումնասիրել Հայաստանում և Ադրբեջանում ներկայումս ժողովրդայնություն վայելող նորությունների կայքերը, դրանց ծագումը և լրատվության պրոցեսը,
- **սովորեցնել հեռուստարձկերություններին և այլ ՉԼՄ-ներին կատարել լրատվական շուկայի ինքնուրույն վերլուծություններ, մասնավորապես ուշադրություն դարձնելով իրենց մասին հանրության կարծիքի վրա:**

Ձեր հարցերը,  
տեսակետներ ըր